

*Խորին շնորհակալություն եմ հայտնում
Վերարտադրողական բժշկության աջակցության Արագիլ բարեգործական
հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին՝ հանձնես
պատվավոր նախագահ, ՀՀ Առաջին Տիկին Ռիտա Սարգսյանի,
տնօրեն Սուսաննա Գաբրիելյանի, բարերար Էթերի Կարապետյանի
ծրագրի բժշկական փորձագետ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Կարինե Թոխունցի,
ազգանվեր առաքելություն ստանձնելու համար:
Բարի՛ արագիլ, Աստծո կամոք և Ձեր հոգացությամբ հայ օջախներում
նորաբողբոջի անթեղումը կօրհներգի ազգս:*

Ճրագալույցի մի բեկուն անթեղ,
Բարկ ծլարձակում նորաբողբոջի
Սուրբ արարչությամբ նյութվում է մարմնում,
Խնկվում ոգելից, լույս թովչությունով:

Անսահման սեր ու կարոտ է հեղվում
Արյան ավիշում՝ հորձանքով հույզի,
Լուրթ երջանկության հեքն է ճեղքում
Պաղ, ցուրտ անդորրը անպտուղ կյանքի:

Ճրագ եք բաշխում՝ բարձրյալի կամոք,
Անթեղ եք բորբում հայ օջախներում,
Օծվում է ազգս մանկաբառ կանչով
ԵՎ օրհներգում է առաքյալներիդ:

Քանի՞ հայ կնոջ արցունք եք սրբել՝
Խանձուր մեկնելով պարապ ձեռքերին,
Հայոց այրերի հառաչն եք կտրել,
Ազգս եք սերել՝ լույսով Ձեր մտքի:

Երդվյալ մարտիկներ ժամանակներիս,
Ընդեմ հայ ազգիս ոճիր-սպանդի
Ծաղկունք եք վառում հայ օջախներում,
Որ թրթռվում է ճիչով նորածնի: